

ՊՐՈՖ. ՆԻԿ. ԱՌՈՂՅ

ՆՈՐ ՀԱՅԵՐԻՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Dr. Art. Abeghian, «Neuarmenische Grammatik, 1936»)

Ստւար աշխատութիւն է, մօտ երեք հարիւր էջ: Ոչ միայն քերականութիւն է, այլ եւ ընթեղցարան իր բառարանով: Միայն քերական մասը բռնում է հարիւր եօթանասուն էջ: Շատ շատ է: Քերական ձեռնարկը որքան եւ մանրակրկիտ լինի չի կարող սպառել իր նիւթը եւ մեկնել լեզվի բոլոր նրբութիւնները: Մանկավարժական տեսակէտից եւս նախադասելի է՝ տալ լեզվի ընդհանուր կերտածը իր հիմնական գծերով: Մանրամասնութիւնները, անգամ երբ կանոնների են վեր ածւած, շփոթում են ուսանողներին եւ աւելի վհատութիւն են բերում քան խրախուսում: Միւս կողմից, կան մանրամասնութիւններ, որ տակաւին տարտամ վիճակի մէջ են եւ վաղաժամ է թերեւս ընտրութիւն անել մրցակից երեւոյթների մէջ: Հարկաւ, այս գիտողութիւնն ընաւ նպատակ չունի որ եւ է կերպ նսեմացընելու Ա. Արեղեանի գեղեցիկ գործը:

Գովելի է որ Ա. Արեղեանը տւել է միաժամանակ երկու գրական լեզուների քերականութիւնը, կցելով նաև գրաբարի ալօս ուրատգիծը: Արեւելեան լեզվի նկատմամբ հետեւել է Մ. Արեղեանի քերականութեան, իսկ արեւմտեանի՝ Հ. Ասատուրի: Գոնէ ինձ այսպէս է թւում: Ոչ մի փորձ չի եղած հաշտեցնելու երկու գրական լեզուները եւ չքննու նրանց դէպի զարդացման ընդհանուր եւ համերաշխ ուղի: Ա. Արեղեանն եւս հետու է այդպիսի մտադրութիւնից: Նա բաւականացել է զնել զէմ առ զէմ երկու լեզուներում ընդունւած քերական ձեւերը առանց զատաւորի եւ քննադատի սպաշտոն ըստանձնելու: Արձանագրել է ամենայն բարեխղճութեամբ բառերի, բայերի եւ նրանց քերական տարագի չեղումները, ձեռնպահ մնալով որ եւ է միջամբ տութիւնից, այս կամ այն ձեւին առաւելութիւն տալու որ եւ է թերագրանքից: Մինչդեռ նիւթը պարտադրում է որոշ քննադատական դիրք հանգէալ քերական ձիւղաւորող, կանոնաւոր թէ զարտուղի, երեւոյթների, նրանց ընաւորութիւնը լուսաբանելու համար, որով

եւ հնարաւոր կլինի հարթելու երկու գրական լեզուների տարածայ-նութիւնները կամ համերաշխութեան բերելու:

Այս փափկանկատ վերապահութիւնն է պատճառը, որ հեղինակը կցելով հանդերձ գրաբարի համառօտ գծագրութիւնը, զլացել է օգ-տըւել նրա լոյսից իր աշխատութեան ընթացքին: Օրինակ, պ. Աբեղ-եան նկատելով որ - ն - եւ - թ - հնչիւններից յետոյ միջակները թա-ւանում են, աւելացնում է առանձին հատւածում որ կան դէպքեր եւ համեմատաբար սակաւ ուր միջակները մնում են միջակ եւ չեն փոխ-ում թաւի: Ուրեմն օրէնքի հակառակ մի երեւոյթ: Սակայն աւելի ճշմարիտ կը լինէմ ասել, որ գրաբարից առնւած բառերը չեն են-թարկում նոյն օրէնքին հասկանալի պատճառով: Այն բառերը որ պահւել են ժողովրդի բերանում արտասանում ենք նաեւ գրական լեզում ինչպէս ժողովուրդն է արտասանում, իսկ գրաբարից փոխ առած բառերը հնչում ենք ինչպէս գրւած են: Արջ արտասանուում է արչ, ործ՝ որց, կարգը՝ կարք, բայց որց մնում է որջ, նոյնպէս ամորձիք, յարգ, զորգ եւ ոչ ամորցիք, յարք, գորք:

Աշխարհաբարը հին լիցել հարազատ ծնունդն է. իր առանձնա-յատկութիւններն անդամ ծագում են հին արմատից: Հարկաւ, դա-սագիրք կազմողից չի պահանջւում լեզուի պատմականը տալ: Սակայն առանց անդրագառնալու անցեալին դժւար է շատ անդամ ոչ միայն մեկնել, այլ եւ նորաստեղծ ձեւերի եւ կազմութիւնների ոգին ըմ-րոնել: Առնենք հոլովումը, օրինակի համար: Ինչո՞ւ մի գրականում ազգ, ազգ-է, իսկ միւսում ազգ-ից, մէկում՝ ազգեր-ի միւսում՝ ազգերու եւ երկուսումն էլ՝ ազգով, ազգեր, ազգերից եւ ազգերուց: Երբ դիմենք հին լիցեն կրտեսնենք որ այս բառ երեւութին խառնակ դրութիւնը ներկայացնում է իրապէս մի հրաշալի ներդաշնակութիւն որպէս համադրական արդիւնք լեզւական յառաջդիմութեան կրկնակի ջանքերի՝ պարզել լեզուն տուանց մունալու հինը, կամ նոր չինք կա-ռուցանել հին նիւթերից: Արդարեւ, գրաբարն ունի չորս ձայնաւոր հոլով. - ի (բանի), - ոյ (գլխոյ), - ու (հաւու), - ոյ (որդուոյ): Տակաւին միջին դարերւ որդույ զառնում է որդոյ եւ այդպէս էլ գրւում, այսինքն ոյ հոլովակերտը նոյնանում է - ոյ - ի հետ: Յե-տոյ ոյ շրջւում է ու-ի, (ինչպէս ասելոյ = ասելու): Այսպիսով ըս-տացնում է երկու հոլովակերտ իրաբ մրցակից, - ի, եւ - ու: Բա-ռերի մի մասը հոլովում է ի-ով, միւսը՝ ու-ով: Մրցութիւնը երե-ւում է յոզնակիւում՝ մի տեղ յաղթանակում է - եր-ի բոլոր հոլով-ների համար, մի ուրիշ տեղ՝ -եր-ու: Եզակի թւում յաղթում է ի-ի բացառականը՝ է, իսկ յոզնակի -ից, -ուց հոլովակերտաները պահում

են իրենց ոյժը բացառականի համար եւ անցնում եղակի թիւը ըստ նմանութեան։ Հին ոյլ հոլովը չի կորչում անյիշատակ, այլ պարտադրում է իր գործիականը՝ ով երկու յաղթականներին հաւասարապէս։ Գոյութեան պայքարն իշխում է նաեւ լեզւի մէջ եւ մրցակից տարրերը պահում են այս կամ այն կերպ իրենց իրաւունքը։ Կոփուը չէ վերջացած։ Կարեւորը մնում է դեռ։ Ո՞ր բառերը պիտի հոլովեն ի-ով եւ ո՞րը՝ ու-ով։ Առաջին հոլովիչը, այսինքն թիւ աւելի զօրաւոր է քան ու վերջինս կարողանում է իւրացնել յատկապէս այն բառերը, որ վերջանում են թիւ-ով, (հոգի, հոգու և այն)։ Միւս գրական շրջանում, ու-ն գրաւում է այն բառերը գլխաւորապէս, որոնք վերջանում են հնչակից ւ-ով։ հաւ, հաւու, կով, սով, հով, արեւ։ Սակայն ի հոլովիչը հետզհետէ զօրանում է եւ արդէն տիրացել է ոչ միայն ի վերջայանդ բառերին, այլ եւ այն բառերին որոնք խմբած են Աբեղեանի մօտ երրորդ հոլով անւան տակ։ (գառի փոխ. գառան, մուկի փոխ. մկան եւ այն)։ Կան գրողներ որոնք հոլովում են անդամ շուն, շունի, տուն տունի։ Մի խօսքով լեզուն ձգտում է դէսի մի հոլով ունենալու պարզութեան։ Թւում է թէ մամուն ու գրագիտութիւնը տրամադիր են խրախուսելու այս երեւոյթը։ Ահա այստեղ է որ քերականը պարտք ունի միջամտելու որպէս դիտող, մանաւանդ որ ներկայ պայմաններում գրագիտութիւնը մեծ գործօն է լեզւի զարգացման գործում աւելի քան երեք։ Կուզեմ ասել որ լեզուն այլեւս կոյր մեքենայ չէ, ինչպէս է անդրագէտ ժողովուրդների մէջ, այլ գիտակցութիւնը խոշոր գեր ունի։ Լեզուն ձգտում է պարզութեան աշխատելով ստեղծել միահոլով սիստեմ։ Զգտումը գովելի է, որովհետեւ պարզութիւնը գիւրութիւն է, իսկ դիւրութիւնը դանձ է։ Սակայն պարզութիւնը ցանկալի է պայմանով որ միօրինակ չլինի, որովհետեւ նախ՝ միօրինակութիւնը տաղտկալի է, աննպաստ բարեհնչութեան եւ նւագայնութեան, եւ երկրորդ՝ միօրինակութիւնն անհրաժեշտ պայման չէ պարզութեան կամ դիւրութեան։ Պարզ եւ դիւրին է այն որ ենթարկում է որոշ օրէնքի կամ կանոնի։ Եւ յանդով բառերը ընդունում են սեռականում ու, օրէնք է. - և յանդով միավանկ բառերը հետեւում են նոյն հոլովման, դարձեալ գրեթէ օրէնք է եւ ուրեմն երկու դէպքում էլ բարդութեան կամ դժւարութեան խնդիր չկայ։ Ազգերի թէ ազգերու, ազգէ թէ ազգից կրկնակի ձեւերը օրէնքի հաստատութիւն ունենալով չեն կարող եւ չպէտք է նկատեին լեզուն անջրապետող, այլ համազօր եւ համերաշխ երեւոյթներ միեւնոյն ականջի եւ գրչի համար։ Նման թելագրութիւններ թէ նկատողութիւններ պէտք է տեղ ունենան քերա-

կան ձեռնարկների մէջ որպէսզի գէթ արթուն եւ զգաստ պահեն լեզ-
ւական գործօն միաքը լնդղէմ այն մոլոր կարծիքի որ լեզուն անդի-
տակից ինքնաշարժ մեքենայ է :

Առնենք խոնարհումները : Որպիսի մեծ ջանք է թափել աշխար-
հաբարը թեթեւացնելու նաեւ չին լեզուի բայագիտական մասը : Այս
տեղ եւս պ . Արեղեան , հաւատարիմ իր լնարած մեթոդին , կարգել է
իրար դէմ երկու լեզուների խոնարհումները առանց փորձելու նրանց
տարրերութիւնները համերաշխութեան շաւզի վրա դնելու : Բացա-
տրել նոր ձեւերի ծագումը նշանակում է գրեթէ երեւան հանել այն
կամուրջը որ պիտի միացնէ երկու լեզուները :

Արեւելեան ներկայի դէմ (կարդում եմ) պէտք չէ դնել արեւ-
մտեան ներկան՝ (կը կարդամ) , այլ նշանակել չիք : Խոնարհումը
մասն է ձեւաբանութեան եւ իրար դէմ պէտք է դնել նման ձեւերը ,
ինչ նշանակութիւն եւ ունենան : Արեւելեան ապառնին (կը կարդամ)
համապատասխան է ձեւաբանորէն արեւմտեան ներկային եւ այլպէս
էլ պէտք է նշանակել : Պիտի կարդամ-ը մնում է նոյնն եւ արեւելեան
լեզուում :

Աշխարհաբարը ջնջել է չին ստորագասական ներկան եւ տեղը
դրել սահմանականը : Չին լեզուն չունէր ստորագասական անցեալ
անկատար ժամանակը եւ փոխարէնը կիրարկուում էր սահմանական
եղանակի անկատարը : Այսպէս՝ ասում էին՝ եթէ կարդայցեմ , բայց
եղանակի ասել օրինակ՝ եթէ կարդայցէի , այլ՝ եթէ կարդայի . եւ
որանից ծագում է ձեւեւութեամբ՝ եթէ կարդամ նոր ձեւը : Այսկերպ
չին սահմանականը դառնում է ստորագասական եւ լեզուն ստիպած
է ստեղծել նոր ձեւի սահմանական : Արդի բարբառները վկայում են
թէ որպիսի որոնումներ են տեղի ունեցել : Վերջապէս ընդհանրացել
է կը կարդամ ձեւը եւ գրական բարձրութեան հասել չնորհիւ կիլիկ-
եան քաղաքակրթութեան :

Նկատելու է որ կը կարդամ ունի իր մէջ նաեւ ապագայի իմաստի
սաղմը : Չին զգացումով կարդամ սահմանական ներկայ է , եւ կը պա-
հում է նրա ներկայ լինելու դիրքը : Բայց երբ կարդամ ստորագասա-
կան է դառնում եւ նոյն մասնիկը տալիս է նրան ապառնի ժամանակի
նշանակութիւն : Չին ապառնին նոյնքան ծանրալուր էր , ինչպէս չին
ստորագասականը եւ ինքն արդէն կատարեալի ստորագասական ձեւն
է , ստացած ապառնի իմաստ : Ստորագասականի կորուստով ապա-
ռնին եւս պիտի չքանար : Ա . Արեղեան կարծում է որ կը կամ կու մաս-
նիկը ծագում է չին զոյ բայից , իսկ Մ . Արեղեանի ենթադրութեամբ
չին ձեւն է կոյ որ ոչ այլ ինչ է եթէ ոչ ցուցական մասնիկ ահա նը-

շանակութեամբ։ Երկու կարծիքն էլ սխալ ենք համարում։ Գոյ բայը հնում անգամ այնքան քիչ է դործ ածւում, որ հետազում չէր կարող մեծ ծաւալ ստանալ։ Կոյ մասնիկը կապ չունի կը-ի հետ եւ հին-կ, (այսորիկ, էսիկ, ասիկա, ասիկալ) ցուցականն է։ Հ. Այտնեանի մեկնութիւնը միակ հնարաւորն է, որ կը, կոյ հին կայ ու -ի ուղումն է։ Եղած առարկութիւնները հիմնաւոր չեն։ Կայ ու կարող է դառնալ կոյ, ինչպէս երեխայ, երեխայ-ութիւն, աղւում է երեխութիւն, տղայ, տղութիւն եւ այլն։ Հնագոյն յիշատակութիւնը կոյ է եւ ոչ կոյ։ Կայ մենայ կամ կայ ու մենայ քերականօրէն միւսնոյն կարգի երւոյթ է ինչպէս պիտի մնամ փոխանակ պիտիմ մնամ, կամ ասեսեմ էր, ասեսես էր, եւն։ Կայ ու մենայ (մնայ հին սահմանակ իմաստով) ունի ներկայի նշանակութիւն։ Խոկ կայ ու մենայ (մնայ, նոր իմաստով որպէս ստորագասական, մօտաւորապէս՝ կայ (որ) մնայ) կը դառնայ ապառնի։ Հայ քերական միտքը դործել է հրաշալի հետեւղականութեամբ։ Հին սահմանական ներկան՝ կարդամ դարձել է ստորագասական եւ ստեղծել նոր ներկայ՝ կը կարդամ։ ապա եւ այս ներկան շրջել է ապառնի, այսպիսով թօթափել է երկու հին թանձրալուր եւ դժւարակազմ ձեւերից՝ կարդացեմ, կարդացից։ Այնուհետեւ կերտել է նոր ներկայ՝ կարդում եմ եւ սրանով լրացրել նոր խոնարհումը Արդ, երբ հասնի ժամանակը եւ կեանքի պայմանները ներեն մտածելու երկու գրական լեզուների միութեան մասին, դիւրին կը լինի հասկանալ որ կարդում եմ եւ կը կարդամ մրցակիցներ չեն, այսինքն մէկը չի սպառնում միւսի գոյութեան, այլ աշխատակիցներ են։ կը կարդամ դառնալով միմիայն ապառնի ոչինչ չի կորցնի ոչ ինքը իր հնչական արժէքից եւ ոչ լեզուն՝ իր հարստութիւնից։ Նման խորհրդածութեան նիւթ են նաեւ կրաւորական բայերի խոնարհման եւ մանաւանդ հնչարանական սիստեմի անջատական երեւոյթները երկու լեզուներում։ Քննութեան եւ հոգածութեան պէտք ունին, որպէս զի միմեանցից հեռանալու ձգտումը չխրախուսի։ Լաւագոյն դատաւորը լեզուն ինքն է, իր ճիզերը, իր հակումները, որոնք լուսաւորում են իր զարգացման ուղին եւ հիմ են տալիս շտկել վրիպումներն ու շեղումները բարգաւաճման մի հունի մէջ պահելու համար գրական լեզուն։

Նպատակ չունենք սպառելու բոլոր այն բազմաթիւ խնդիրները, որոնք լուրջ հետազոտութեան նիւթ պէտք է լինեն համեմատական քերականութեան մէջ, որպէս զի լեզուն, կանգնած պատմական հողի վերա, յառաջանայ անարգել իր խոկ մշակած սկզբունքներով եւ ոչ չնի եւ նորի վերա հիմնաւծ, հակասական կանոններով։ Պ. Արեգեան

կատարել է այն ինչ որ սպասելի էր վաղուց : Քննելի նիւթերն այժմ դասաւորւած են դէմ յանդիման եւ մատչելի լեզւի միութեան եւ մաքրութեան նախանձախնդիրներին :

Պէտք է զգուշանալ սակայն եւ չկարծել որ արեւելեան եւ արեւմըտեան գրական լեզուներին վերագրած ձեւերը անանցանելի խրամատով են բաժանւած : Արեւելեանը գերադասում է - ից բացառականը, բայց այդ չէ նշանակում որ նրան խորթ է - և բացառականը : Նոյնը եւ արեւմտեանի համար : Մամուլի դեկավարները պարտք են համարում, յանուն բարբառների մաքրութեան, ուղղել արեւելեանը ըստ արեւելեանի և արեւմտեանը՝ ըստ արեւմտեանի : Այս չէ տանում դէպի մի գրական լեզու ունենալու բաղադրի տենչանքին : Ողբացեալ Օհան Կարօն գանդատում էր որ ընկերակիցներն իրեն յանդիմանում են որ կրաւորականի - ուեցալ վերջաւորութեան փոխարէն գործ էր ածում - աւեց : Եթէ գաւառական գրողների ձայնը այսպէս պիտի խեղդի ի նպաստ դասագրքերում աւանդւած քերական կանոնների, գրական լեզուն կը շարունակի մնալ իր կիւիկեան հին ձորձի մէջ : Դպրոցական քերական ձեռնարկները պէտք է լինեն առաջնորդներ եւ ոչ բոնակալներ հանդէպ մի լեզւի որի ձեւարանական յեղաշրջումը դեռ իր լրումն չէ ստացել եւ մանաւանդ պէտք է խրախուսեն այն հակումները որ տանում են դէպի գրական լեզուների միութիւն :

Պ. Ա. Արեղեանի աշխատութիւնը զգալի թերութիւն չունի եթէ այդպիսին չհամարենք ճապաղութիւնը եւ մանր-մունը սիսալները : Կան աւելորդաբանութիւններ : Յաճախ յիշում է գաւառական կամ դռեհիկ ձեւեր, որ ներելի է միմիայն այն դէպքում երբ ծառայում են որ եւ է բացատրութեան, պարզաբանութեան : Երբեմն առաջարկում է կանոններ որ անհիմն են եւ նիւթն էլ չէ պահանջում : Օրինակ, զ, ս, շ սովորաբար հնչում են բառերի մէջերում մեր՝ զը, ըս, ըշ, ինչպէս զգալի, սքանչելի, շտեմարան, մերթ՝ լը, սը, շը, որպէս զլանալ, սրահ, շքեղ : Արեղեանի կարծիքով, առաջին հնչումը բացատրելու է նրանով որ յիշեալ տառերը գրւած են փակածոյ (verschlusslante) կոչւած բաղաձայների տուած, իսկ երկրորդ դէպքում՝ ոչ փակածոների : Սակայն ք փակածայն է եւ շքեղ-ի մէջ արտասանուում է շըքեղ եւ ոչ ըշքեղ, նոյնպէս պլ, սըփոել, սըպրտել, սըպաս, սըքեմ եւ այլն բառերի մէջ, ինչպէս եւ կ, սըկեմ : Հետեւապէս կանոնը սիսալ է : Եւ միթէ՞ պէտք կայ պարտադրելու որ ըզ կամ զը հնչեն . իսկ եթէ մէկն արտասանէ առանց ը-ի, skanceli, shtemaran, արդե՞օք յանցանք դործած կը լինի : Ոչ . մեր նախնիք հընչում էին սքանչելի առնց ը-ի որպէս եռավանկ բառ, ինչպէս երեւուա